

ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ Ս. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԴՐՈՇՄԻ ՄԱՍԻՆ

14) Եկեղեցւոյ հայրերը ինչպէ՞ս կը մեկնաբանեն Յիսուսի մկրտութեան դրուագը:

Այսօր մեղսաճաշակ խաբերաներու մէջն ու մարախուղը, որոնք Ադամի անէծքներուն պատճառով էին հալածուեցան, քանզի Քրիստոս գալով մեզի համար անէծք եղաւ, իսկ բոլոր երկրածին ազգերը Անոր միջոցով օրհնուեցան... Այսօր կորուստի ուղիները անհետացան, պատրանքներու ճամբաները փակուեցան եւ մարդկային ցեղի համար ճշմարտութեան ճանապարհն ու պողոտան ստեղծուեցաւ ջուրով եւ հոգիով անվախճան կեանքին վերածնուելով:

Այսօր Ս. Սերովբէի հրեղէն սուրբ կենաց ծառէն վերցուեցաւ, որովհետեւ արքունական զգեստով պճնուեցանք սուրով վերածնուելով, որուն առջեւ Սերովբէն գիջելով կենաց ծառի շաւիղները կը բանար: Այսօր տրամութենէն ազատեցանք հագուելու համար այս նոր «Քրիստոնեաներ» անունը, աւագանի վերածնութեամբ Քրիստոսով զգեստաւորուելով, Քրիստոսի հետ ժառանգորդներ դառնալով: Յովհաննէս Երզնկացին Տիրոջ Ս. ծննդեանը նուիրուած սքանչելի ճառին մէջ կ'ըսէ. «Իսկ ինչո՞ւ երեսուն տարեկանին մկրտուեցաւ»: Նախ, որովհետեւ նոյն տարիքին Ադամը մեղանչեց: Երկրորդ Ադամը նոյն տարիքին եւ անմեղութեամբ կը լուայ առաջին Ադամի մեղքը:

ԱՂԱՆԴԱԴՈՐԱԿԱՆ ՇՈՐԺՈՒՄՆԵՐ

ԲԱՍԸԼԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄԱԿԱՆԸ

9- ՄԵՌԵԼՆԵՐՈՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ

Քրիստոնէութիւնը հանդերձեալ կեանքի իր պատկերացումին մէջ, յունական եւ այլ աշխարհներու իմաստասիրական ըմբռնումներէն կը տարբերի ճիշդ անով՝ որ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ կ'ընդունի, որուն առաջին օրինակը եղաւ Քրիստոս: Այդ հաւատքով ալ Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Եթէ կը հաւատանք, թէ Յիսուս մեռաւ եւ յարութիւն առաւ, նոյնպէս ալ Աստուած ննջեցեալները Յիսուսով պիտի բերէ անոր հետ» (Ա. ԹԵՍ. 4:13):

Բ- Կ'ըսեն, թէ բոլոր մեռելները չէ՛ որ յարութիւն պիտի առնեն, այլ՝ միայն ընտրուածները կամ արդարները: Սակայն Աստուածաշունչը հակառակը կ'ըսէ: Յիսուս առիթով մը Երուսաղէմի մէջ յայտարարեց. «Ժամանակը պիտի գայ, երբ բոլոր գերեզմաններու մէջ եղողները անոր՝ «Մարդու Որդին» ձայնը պիտի լսեն եւ դուրս պիտի գան: Անոնք որ բարի գործեր կատարած են՝ կեանքի յարութեան համար, եւ անոնք որ չար գործեր կատարած են՝ դատապարտութեան յարութեան համար» (Յովհ. 5:28-29): Պարզ չէ՞, որ յարութիւն՝ բոլորին համար կ'ըսուի եւ ո՛չ միայն արդարներուն:

Միրելի ընթերցող, ճՐԱԳ քերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովորդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՅԷ.



ԲՈՒ ԽՕՍԲԴ ԽՄ ՈՏԹԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԾԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԱ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 5 ՕԳՈՍՏՈՍ 2018 ԹԻՒ 31

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄԵՐ
ԵՍ. 7.1-9: Ա. Կր. 13.11-14.5:
ՅԻՍՈՍ ԲՐԻՍՏՈՍԻ ԱԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 2.1-12

Քանի մը օրեր ետք Յիսուս վերադարձաւ Կափառնաում: Անմիջապէս որ լուր տարածուեցաւ թէ տան մէջ կը գտնուի, շատեր հաւաքուեցան հոն, այնքան որ դրան առջեւ իսկ տեղ չէր մնացեր: Եւ Յիսուս Աստուծոյ խօսքը կը քարոզէր անոնց:

Այդ միջոցին Յիսուսի բերին անդամալոյծ մը, որ չորս հոգիներ շալկած էին: Երբ ամբոխին պատճառով չկրցան զայն Յիսուսի մօտ բերել, քակեցին տունին տանիքը եւ առաստաղը բանալով՝ անդամալոյծը մահիճով վար իջեցուցին: Յիսուս անոնց հաւատքը տեսնելով ըսաւ անդամալոյծին. «Որդեակ, մեղքերդ ներւած ըլլան քեզի»:

Օրէնքի ուսուցիչներէն ոմանք, որոնք հոն նստած էին, սկսան մտովի քննադատել զայն. «Ինչպէ՞ս կը համարձակի ասանկ բան ըսել. ըրածը հայհոյութիւն է: Աստուծմէ գատ ո՞վ կրնայ մեղքերը ներել»:

Յիսուս վայրկեանին գիտցաւ անոնց մտածումը եւ ըսաւ. «Ինչո՞ւ այդպէս կը մտածէք: Ո՞ր մէկը աւելի դիւրին է. անդամալոյծին «մեղքերդ ներուած են քեզի» ըսե՞լը, թէ «ե՛լ, մահիճդ ա՛ն եւ տունդ գնա՛» ըսելը: Բայց որպէսզի գիտնաք, թէ մարդու Որդին երկրի վրայ իշխանութիւն ունի մեղքերը ներելու՝ ահա՛ նաեւ կը բժշկեմ զայն»:

Ու դառնալով անդամալոյծին, ըսաւ. «Քեզի կ'ըսեմ. ե՛լ, ա՛ն մահիճդ եւ տունդ գնա՛»: Անդամալոյծը անմիջապէս բոլորին առջեւ ոտքի ելաւ, վերցուց իր մահիճը եւ դուրս ելաւ: Բոլորն ալ զարմացան. կը փառաւորէին զԱստուած եւ կ'ըսէին. «Այսպիսի բան բնաւ տեսած չէինք»:

Իմաստութիւնը փանապարհներուն սկիզբը կը փառաբանուի եւ հրապարակներուն վրայ բարձրաձայն կը հռչակուի. պարիսպներու բարձունքէն կը փարգուի, ամբոցներու դռներուն կը յայտարարուի եւ փառքներու դարպասներուն համարձակօրէն կը խօսուի: (Առակաց 1.20-21)

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԵՓԵՍՈՍԻ Ա. ԺՈՂՈՎՈՅՆ
200 Ա. ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ



Եփեսոսի Տիեզերական ժողովը իր տօնակատարութիւնը ունի Հայց. եկեղեցւոյ մէջ՝ վերափոխման Բարեկենդանի Շաբաթօրը:

Եփեսոսի տիեզերական ժողովը գումարուեցաւ 431 թուականին, մասնակցութեամբ՝ 200 հայրապետներու, քննելու համար Նեստորի աղանդաւորական մոլար վարդապետութիւնը:

Նեստոր կ'ըսէր, որ Յիսուս մարդ ծնաւ մեզի նման, ապա աստուածային բնութիւն ստացաւ: Նեստոր կ'ուսուցանէր նաեւ, որ Ս. Կոյս Մարիամ Աստուածածինն չէ, այլ՝ մարդածին: Նեստորի այս մոլար վարդապետութիւնը մեծ խոռվութիւն յառաջացուց:

Նեստորի դատապարտելի ընթացքը քննելու համար, Փոքր Թէոզորոս կայսեր հրամանով, Եփեսոս քաղաքին մէջ, 200 հայրապետներու մասնակցութեամբ, տեղի ունեցաւ տիեզերական ժողով: Ժողովի ընթացքին դատապարտուեցան Նեստորն ու իր համախոհները եւ հաստատուեցաւ Կիւրեղ Աղեփսանդրացիի բանաձեւը՝ Քրիստոսի բնութեան վերաբերեալ «Մի բնութիւն Բանին մարմնացելոյ» նախադասութեան մէջ իտացնելով: Ըստ այս բանաձեւին՝ Յիսուս ծնաւ որպէս Աստուած եւ իր աստուածային ու մարդկային բնութիւնները անշփոթ կերպով իրար միացան եւ կազմեցին **մէկ բնութիւն**: Իսկ Ս. Կոյսը դաւանեցին **Աստուածածին**:

Հայ եկեղեցին եւս ընդունեց Եփեսոսի ժողովի կանոններն ու որոշումները եւ եկեղեցական օրացոյցին մէջ յատուկ օր ալ նշանակեց տօնելու եւ յաւերժացնելու համար այդ ժողովի յիշատակը:

Այստեղ անհրաժեշտ կը համարենք յիշատակել, որ Հայ եկեղեցին կ'ընդունի միայն երեք տիեզերական ժողովներ՝ Նիկիոյ, Եփեսոսի եւ Կ. Պոլսոյ, եւ կը դաւանէ միայն անոնց որոշումներն ու բանաձեւումները:

Հարցում պատասխան բաժին

Ի՞նչ ՀԱՆԴԻՍԱԿՈՐՈՒԹԵԱՄԲ ԿԸ ԿԱՐԴԱՑՈՒԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ

Աւետարանի ընթերցումը միւս բոլոր ընթերցումներէն շատ աւելի մեծ բացառութիւն ունի: Չայն կը կարդան առանձին հանդիսաւորութեամբ: Սարկաւազը կը ձայնէ Օրթի (Ուղքի). քահանան՝ Խաղաղութիւն ամենեցուն (Խաղաղութիւն ամենուղ). դպիրները՝ Եւ ընդ հոգւոյդ քում (Նաեւ քո՛ւ հոգիիդ). սարկաւազը՝ երկիւղածութեամբ լուարուք (Երկիւղածութեամբ մտիկ ըրէ՛ք). Աւետարանը կարդացողը՝ Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Զրիստոսի որ ըստ Մատթէոսի (Յիսուս Զրիստոսի Աւետարանը՝ Մատթէոսի համաձայն). դպիրները՝ Փառք քեզ Տէր Աստուած մեր (Փա՛ռք քեզի, Տէր Աստուած մեր). սարկաւազը՝ Պռոսիսումէ (Մտիկ ընէ՛ք). ժողովուրդը՝ ասէ Աստուած (Աստուած է որ կը խօսի):

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ՀԱՅ ՄԱՅՐ, ՄԱՐԻԱՄԱԻ ՆՄԱՆ ՉԱՒԱԿԴ ԱՍՏՈՒԾՈՅ ՆՈՒԻՐԷ՝

Ղուկաս 2.22-ին մէջ կը կարդանք, թէ «Յովսէփն ու մարիամը մանուկը Երուսաղէմ տարին Տիրոջ ընծայելու համար»: Յովսէփին ու Մարիամին օրինակով մեր ծնողները իրենք եւս պէտք է իրենց մանուկները ընծայեն Աստուծոյ: Բայց ի՞նչ կը հասկնանք մեր «մանուկները Աստուծոյ ընծայել» բացատրութեամբ: Մանուկները Աստուծոյ ընծայել՝ զանոնք եկեղեցի բերելով քառասունքէն հանել չէ պարզապէս. ո՛չ ալ տարին անգամ մը Տեառնընդառաջի տօնին առիթով զանոնք խորան բարձրացնել ու սուրբ Մեղանն շուրջ դարձնելը: Մեր մանուկները Աստուծոյ ընծայել, կը նշանակէ զանոնք Աստուծոյ յանձնել, զանոնք Աստուծոյ տրամադրութեան ներքեւ դնել, զանոնք Աստուծոյ հոգատարութեան ու պաշտպանութեան վստահիլ, զանոնք Աստուծոյ կամքին հնազանդութեան վարժեցնել, զանոնք Աստուծոյ հետ հաղորդակցութեան մէջ դնել: Ի՞նչ կ'արժէ մեր մանուկները քառասունքէն հանելը, երբ անկէ ետք զանոնք Աստուծոյ սիրով ու երկիւղով պիտի չդաստիարակենք: Ի՞նչ կ'արժէ մեր մանուկները խորան բարձրացնել, եթէ երբեք անկէ ետք անոնց պիտի չտրվեցնենք բնակիլ Աստուծոյ խորանին, այսինքն՝ ներկայութեան մէջ: Ի՞նչ կ'արժէ մեր մանուկները սուրբ սեղանին շորջ դարձնելը, եթէ անկէ ետք անոնց պիտի չտրվեցնենք Աստուծոյ սրտին շուրջ դառնալ:

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

ԴԱՐՉՈՒՑԱԾ ԵՍ ՅԻՍՈՒՍԸ ԵՐԱՇ ԽԱԿՈՐԴ

Կորսուած էի Տէր Յիսուս, եւ դուն երաշխաւոր եղար երկնաւոր Հօրդ եւ վստահեցուցիր թէ զիս պիտի գտնես: Մեղքի պարտքերուն տակ կ'իմացէի, եւ դուն իմ պարտքերս վճարելու համար երաշխաւոր եղար: Մեղքերուս պարտք չէր կրնար վճարուիլ եթէ դուն չվաճառուէիր երեսուն կտոր արծաթի: Վաճառուեցար զիս գնելու համար: Եւ գնեցիր երկինքի փառքին համար: Մարդիկ երաշխաւոր չեն ըլլար նոյնիսկ իրենց բարեկամներուն համար, բայց դո՛ւն, Տէր, յօժարակամ յանձն առիր քեզի թշնամութիւն ընողիս համար երաշխաւոր ըլլալ Աստուծոյ առջեւ: Զիս սիրեցիր: Անձո՞ր անձիս փոխարէն ու անձիս տեղ գոհեցիր: Զիս ոտքի կանգնեցնելու համար, յանձն առիր իսաչին բերան տակ իյնալ: Ինկար եւ ես կանգնեցայ: Մեռար եւ ես կենդանացայ:

ԿԸ ՍԻՐԵ՞Ս...

Մեր ունեցողը համբերատար կ'ըլլայ եւ քաղցրաբարոյ: Մեր ունեցողը չի նախանձիր, չի գորոզանար, չի հպարտանար, անպատշաճ վարմունք չ'ունենար, միայն ինքզինք չի մտածեր, բարկութեամբ չի գրգռուիր, չարութիւն չի խորհիր, անիրաւութեան վրայ չ'ուրախանար, այլ ուրախակից կ'ըլլայ ճշմարտութեան: (Ա. Կորնթ 13.4-6)

ԽՐԱՏԱԿԱՆ

Թող ձեր խղճմտանքը մաքուր ըլլայ, որպէսզի ամօթով մնան անոնք՝ որ ձեր մասին կը չարախօսեն, ձեր քրիստոնէական բարի կենցաղը բամբասելով: (Ա. Պետր. 3.16)